

1887

Հրատարակութիւնը ազգային տպարանաց յին-
 թացս 1886 ամին. 12: — Էրզ վանեցւոց. 16: —
 վարդանայ վարդապետի աշխարհացոյց ամենայն տիե-
 ղերաց. 134: — Պատառիկ մի ի գրոց մեծի վարժա-
 պետին վարդանայ վասն գիւտի տառից մերոց ի ձեռն
 Ս. Մեսրոպայ. 197: — Քննադատութիւն թղթոյն Մ.
 Խորենացւոյ առ Սահակ Արծրունի եւ Պատկերի Տի-
 րամոն ի Հոգեաց վանս. 97: — Էրանելւոյն Յովհաննու
 Ոսկերեանի մեկնութիւն Եսայիայ մարգարէին թարգ-
 մանայ լատիներէն. 291: — Քննադատութիւն Ատոյի
 Բառամարտնէրի Մովսիս Խորենացւոյ Պիտոյից գրոց
 վրայ. 306: — Նշանք Հայկական երաժշտութեան. 315:
 — Նեմեսիոս եւ նորա յաջագս բնութեան մարդոյ գրոց
 Հայկական հին թարգմանութիւնն. 318:

Ար վերջացրնենք Բաղձափայտի վրայ յո-
 դուածս, մեր անձնական կարծիքն համառօտելով:
 Բաղձափայտի մեծ արդիւնք ունի վաստըկած իւր
 45 ամեայ կենաց պատկառելի հասակին մէջ: Ար-
 դիւնք մը Եւրոպացւոց առջեւ, որոնք ազգային
 շատ բաներու ծանօթացած են Բաղձափայտի հայ
 բայց մանաւանդ երբեմն երբեմն տեսնուած գաղ-
 ղիներէն կամ իտալներէն ծանրակշիռ յօդուած-
 ներով: Եւ իրօք ամէն եւրոպացի՛ երբ Հայոց վրայ
 կը գրէ, կը յիշատակէ ի մասնաւորի Բաղձափայտը:
 Բաղձափայտի ունի նաեւ իրական արդիւնք մ'ազգին
 հինչպէս հասարակ ժողովուրդեան՝ նոյնպէս գիտ-
 նոց առջեւ: Ի սկզբան, երբ իւր նմաններն շատ
 քիչ կային ազգին մէջ, գիտութիւններն պարզ
 եւ հասարակ ոճով ծանօթացուց ժողովուրդեան,
 ազգային յօդուածներով՝ որոնցմէ թէեւ ոմանք
 այսօր նշանակութիւն չունին, ազգին հնքնաճա-
 նաչութեան արժննալուն ձեռնտու եղաւ, եւ
 տուաւ նաեւ գիտնոց՝ ազգային հնութեանց եւ
 գրականութեան վրայ բազմաթիւ յօդուածներ,
 որոնցմէ շատերն այսօր օգտակարապէս կ'ընթեր-
 ցուին: Բաց ասկէ՛ եւրոպացի եւ յոյն դասական
 մատենագրութիւնք ըստ մասին, բազմաթիւ
 թատրներ ու վէպեր ի հայ թարգմանութեամբ
 ազգային ստացուածք եղած են այսօր Բաղձափայտի
 միջոցաւ: Ո՛ւր թողունք ազգային թանկագին ձե-
 ոագրաց կամ հատակոտորներու հրատարակու-
 թիւնքն ալ, որոնք անբաւ արժէք ունին ոչ միայն
 ազգային գիտնոց, այլ եւ Եւրոպացւոց առջեւ:

Ասոնք են, ըստ մեզ, Բաղձափայտին առաւե-
 րութիւններն: Սակայն մեր տկար աչքը չի տես-
 ներ հոն ուրիշ քանի մը յատկութիւններ ալ,
 որոնք որեւէ թերթի անհրաժեշտ են: Թերթ մը,
 ըլլայ ուսումնական, ըլլայ ընտանեկան, արուեստ-
 գիտական եւ այլն, ցորչափ հոռոտիւն իրեն բաց-
 արձակ ասպարէզ չէ ընտրած, պէտք է անհրա-
 ժեշտ աւելի իւր Բաղձափայտի մէջ ապրիլ, մերձե-
 նալ ժամանակակից դիպաց այնչափ՝ որչափ իւր
 ուղղութիւնն իրեն կը ներէ: Այս կէտն, կար-

ծենք, Բաղձափայտի մեծարոյ խմբագրութեան մտա-
 գրութեանը կարօտ է:

Ուսումնական թերթի մ'էական է քննա-
 դատական ոգի, եւ այս միայն կրնայ թերթին
 ներքին արժէքն որոշել: Բաղձափայտի հնքնագիր
 ազգային յօդուածոց մէջ ընդհանրապէս կը
 բաղձացուէր տեսնել աւելագոյն քննադատա-
 կան ոգի, ժամանակին հմտական քննութեանց
 եւ ասոնց իրական արդեանց ծանրակշիռութիւն
 տալ, թողուլ ի հնոց հնչ որ թողի է, միով
 բանիւ քալել միշտ ժամանակին յառաջադի-
 մութեան հետ: Գիտութեան լծակն է կաս-
 կածն, եւ այս կասկածն է որ գիտութիւնները
 յառաջադիմութեան այժմու հսկայ հասակին
 հասուցած է: Անտարակուսելի է որ նաեւ մեր
 ազգային գիտութիւնն ալ ասով միայն կրնայ
 գիտութեան անուան արժանի ըլլալ:

Մեր անկողմնակալութեան պարտքն հա-
 մարեցանք յիշատակել հոս նաեւ այս հանգա-
 մանքներն՝ որոնք ըստ մեր տեսութեան կրնային
 մեծցընել նոյն առաւելութիւնքն: Սակայն այս
 վերջնոց այնպէս լիով չտեսնուիլը՝ ոչինչ իւրիւր
 նուազեցընէ առաջնոց բազմութիւնը, եւ ոչ ալ
 կը նսեմացընէ անոնց պայծառութիւնը: Բաղձափայտի
 հինչպէս որ է՝ ոչ միայն եղած է մին ի գլխաւոր
 միջնորդաց՝ այլ եւ սկզբնաւորութիւն ազգային
 այժմու յառաջադիմութեան:

Եթէ վենետիկի Մեծ. Միաբանութեան
 պարտական է ազգս մեծ երախտագիտութիւն,
 ասոր ոչ փոքր մասն պէտք է հայիլ այս հրատա-
 րակութեան, որ եւ պիտի մնայ միշտ անմահ յի-
 շատակ Մեծարոյ Միաբանութեան գրաւոր գոր-
 ծունէութեան:

(Հարոտնափայտի)

Հ. Գ. Գ.

ՄԻՆԱՍ ԹՈՒՍԹԵՑԻ

Որք ի վերայ օրստաց երկրի
 հայերուն ի թաւիտաթցի Միևսս
 սարկօսոց ասացեալ:

(Հարոտնափայտի վերջ)

Վարձեալ կրօնին հրաման հանց,
 ամէն քաղաք յարմաշ խրկեց,
 զգրուիս հայերն ամէն բրունց,
 զեկեղեցիքն ամէն մահրեց:
 Զիրիցանին զվրթըն ձենեց,
 եւ յակամա դիւրեանք կրնքեց,
 լուսաւորին հօտէն հանց,
 մեծ հրամանաւ ասրապրեց:
 Թէ զինչ հայ կայ թող մըկըրտին,
 կանայք և աղջկունք ի միասին,
 թող հայ չկենայ ի մեր երկրին,
 ամէն հոռմի հաւատ լինին:
 Եկեղեցի զինչ կայր հայի,
 խոթին, սերթի, եւ յազարի:

1 Պատկ. յԱրդարէր: